2024 թ.

Աշխատաշուկայի կարիքների վերլուծություն. «Կինեզիոլոգիա ԿԾ

Որակի ապահովման բաժին

Բովանդակություն

Ներածություն 3
Հարցման արդյունքները 4
Եզրակացություններ 15
Առաջարկներ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Որակի ապահովման բաժինը, հետամուտ լինելով բուհի մատուցած կրթության որակի բարելավմանն ու աշխատաշուկայի համար մրցունակ կադրեր պատրաստելու քաղաքականությանը, իրականացրել է «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի մասնագիտական աշխատաշուկայի կարիքների գնահատում:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրության նպատակն է թիրախավորել գործատուի ներկայիս պահանջները, բացահայտել աշխատաշուկայի զարգացումները, աջակցել մասնագիտական կրթական ծրագրի որակի և մրցունակության բարձրացմանը:

Մասնագիտական աշխատաշուկայի պահանջների ու գործատուի ներկայացրած առաջարկների վերլուծության արդյունքները կիրառվում են ՄԿԾ շրջափուլային վերանայման գործընթացում՝ նպաստելով կրթական ծրագրի շարունակական բարելավմանը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հարցումը հասցեատերերին առաքելու համար ՀՖԿՍՊԻ–ի Որակի ապահովման բաժինը պաշտոնական նամակագրությամբ դիմել է ՀՀ վերականգնողական կենտրոններին, հիվանդանոցներին, կլինիկաներին և նմանօրինակ այլ հաստատությունների՝ Ֆիզիկական վերականգնման ամբիոնի շնորհիվ նախապես հավաքագրելով և բաժնի ջանքերով ամբողջացնելով նրանց տվյալների բազան:

Արդյունքում հնարավոր է եղել հարցումն ուղարկել ոլորտի 13 գործատուի, որոնց 69%-ը՝ 9 ներկայացուցիչ մասնակցել է հարցմանը:

Հարցաթերթը

Հարցաթերթը մշակվել է ՈԱԲ–ի կողմից ոլորտի տեղական և միջազգային աշխատաշուկաների կարիքների գնահատման համար նախատեսված հացաթերթերի ուսումնասիրության, գործատու ոլորտի մասնագետների հետ քննարկումների արդյունքում, ինչպես նաև հաշվի են առնվել Ֆիզիկական վերականգման ամբիոնի պրակտիկ մասնագետների դիտարկումներն ու առաջարկները:

Հարցաթերթը բաղկացած է 13 հիմնական և 4 ենթահարցերից: Որակական գնահատականներ ստանալու համար հարցաթերթում առկա է 3 բաց հարց: 5–րդ հարցի համար հնարավոր է եղել ընտրել պատասխանի մի քանի տարբերակ:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2023-2024 ուսումնական տարում իրականացված հետազոտությանը մասնակցած գործատու ոլորտի ներկայացուցիչներից անցկացված հարցմանը հնարավոր է եղել հավաքագրել 9 գործատուի մասնագիտական կարծիք, որոնց ցանկը ներկայացվում է ստորև.

Աղյուսակ 1

1	Շիացու վերականգնողական կենտրոն
2	Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ ԱրԲԵՍ ԱԿ ամբուլատոր վերականգնողական բաժանմունք
3	Գյումրիի Վերականգնողական կենտրոն
4	Սիրունյան ֆիզիկական վերականգնման կենտրոն
5	ՀԿԽԸ "Գրացիա" ՄՎԿ ՍՊԸ
6	Վանաձորի բժշկական կենտրոն
7	Աքսիոմեդ
8	Ուիգմոր քլինիք
9	Հանրապետական Վերականգնողական Կենտրոն ՓԲԸ

Հարց 2. Խնդրում ենք նշել Ձեր կազմակերպության ձևը:

Գծապատկեր 1



ՀՖԿՍՊԻ–ի հարցման մասնակիցները հիմնականում եղել են վերականգնողական կենտրոնները, թույ է եղել հիվանդանոցների և կլինիկաների հետաքրքրվածությունը ներգրավվելու իրականացվող հետազոտությանը (տե՛ս Գծապատկեր 1):

Հարց 3. Ձեր կազմակերպության կինեզիոթերապիստներից քանի՞սն ունեն բարձրագույն կրթություն:

Գծապատկեր 2



Հատկանշական է, որ հարցմանը մասնակցած կազմակերպություններում չկա մեկը, որտեղ մասնագետներից և ոչ մեկը չունի բարձրագույն կրթություն (Գծապատկեր 2): Սակայն մտահոգիչ է նաև այն, որ որոշ կազմակերպություններում աշխատում են կինեզիոթերապիստներ, ովքեր չունեն մասնագիտական որակավորում:

Հարց 4. Ձեր կազմակերպության կինեզիոթերապիստները քանի՞ տարվա աշխատանքային փորձ ունեն:

Գծապատկեր 3



Հարկ է ընդգծել, որ հարցմանը ներգրավված հաստատություններում բոլոր մասնագետներն ունեն առնվազն 3,5 տարվա աշխատանքային փորձ: Հարցված կազմակերպությունների մեծամասնության դեպքում (62,5%) կինեզիոթերապիստներն աշխատում են 9,5 և ավելի տարիներ: Ամենաքիչ աշխատանքային փորձն ունեն Սիրունյան ֆիզիկական վերականգնման կենտրոնի կինեզիոթերապիստները:

Հարց 5. Որտե՞ղ են Ձեր կինեզիոթերապիստները ստացել մասնագիտական կրթություն (հնարավոր է նշել մի քանի տարբերակ[1]):

Գծապատկեր 4



Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ իրենց հաստատություններում աշխատող կինեզիոթերապիստները հիմնականում կրթությունը ստացել են ՀՖԿՍՊԻ–ում (88,9%) (տե՛ս Գծապատկեր 4): Այնուհետև հաստատությունների մասնագետները կրթություն են ստացել արտերկրի ուսումնական հաստատություններում (33,3%), հետո՝ միջին մասնագիտական կրթական հաստատություններում (22,2%) և վերջում՝ Արցախի պետական ինստիտուտում (11,1%):

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ «Աքսիոմեդ», «Ուիոգմոր քլինիք», Հանրապետական վերականգնողական կենտրոններում աշխատող կինեզիոթերապիստները, բացի ՀՖԿՍՊԻ–ից կրթություն են ստացել նաև արտերկրի ուսումնական հաստատություններում (Վրաստան, Հունաստան):

Հարց 6. Ձեր կազմակերպության կինեզիոթերապիստները վերջին 5 տարիների ընթացքում անցե՞լ են վերապատրաստումներ:

Գծապատկեր 5



[1] *Հարցի համար հնարավոր է եղել պատասխանների մի քանի տարբերակ, այդ իսկ պատճառով տոկոսային համագումարը գերազանցում է 100%–ը:*

Հատկանշական է, որ հարցմանը մասնակցած գործատուն կարևորում է մասնագիտական վերապատրաստումները, ինչի մասին վկայում է այս հարցի 100% «Այո» պատասխանը (տե՛ս Գծապատկեր 5):

Հարց 6.1 Եթե այո, ապա որտե՞ղ:

Պարզելու համար, թե հարցմանը մասնակցած կինեզիոթերապիստները որտեղ են վերապատրաստում անցել վերջին 5 տարիների ընթացքում, հարցաշարում եղել է բաց հարց: Ըստ տրված պատասխանների՝ բժշկական կազմակերպությունների մասնագետներն իրենց վերապատրաստումներն հիմնականում անցել են արտերկրում (Վրաստան, Հունաստան) կամ միջազգային կազմակերպություններում ու արտասահմանյան մասնագետների կողմից (6 պատասխան):

Վերապատրաստումներ մասնագետներն անցել են նաև Երևանի պետական բժշկական համալսարանում, Հայաստանի ֆիզիկական թերապիայի և մերսման ազգային ֆեդերացիայում:

Հարցված կազմակերպություններից միայն մեկի մասնագետ(ները) են վերապատրաստում անցել ՀՖԿՍՊԻ–ում:

Հարց 7. Որքա՞ն է կազմում Ձեր ընկերությունում աշխատող կինեզիոթերապիստի աշխատավարձը:

Գծապատկեր 6



Թեև հարցվածների 33,3%–ը հրաժարվել է պատասխանել աշխատավարձի մասին հարցին, սակայն նույնքան՝ 33,3% նշել է, որ աշխատավարձը հիմնականում տատանվում է 201 հզր.–ից մինչև 300 հզր. դրամի սահմաններում (տե՛ս Գծապատկեր 6): Հարցված կազմակերպությունների ցանկում կինեզիոթերապիստի համար ամենացածր աշխատավարձը տատանվում է 76 հզր.–ից մինչև 150 հզր. դրամ:

Հարց 8. Որքանո՞վ եք կարևորում մասնագիտական կրթությունը կինեզիոթերապիստի աշխատանքի ընդունելիս

Գծապատկեր 7



Հարցմանը մասնակցած հաստատությունները առավելապես կարևորում են համարում բարձրագույն կրթությունն («Պարտադիր»՝ 88,9%) ու վերապատրաստումները («Պարտադիր»՝ 77,8%) (տե՛ս Գծապատկեր 7):

Հետաքրքրական է, որ հարցման մասնակցած առողջապահական հաստատությունների որոշ տոկոս (11.1 %) մասնագիտական կրթությունը պարտադիր չի համարում: Այս խնդիրը դիտարկվել է գործատուների կարիքների գնահատման ՈԱԲ մյուս ուսումնասիրություններում ևս, երբ բարձրագույն կրթությունը կարևորվում է, իսկ մասնագիտականը՝ ոչ այնքան:

Հարց 8.1 Արդյո՞ք կարևորում եք մասնագիտական դիպլոմում առկա մասնագիտական առարկաների գնահատականները կինեզիոթերապիստի աշխատանքի ընդունելիս:

Գծապատկեր 8



Այս հարցի պատասխանը վերահաստատում է նախորդ հարցի ենթադրությունը: Գործատուի պատասխանը կապված մասնագիտական առարկաների գնահատականների հետ կիսվել է (տե՛ս Գծապատկեր 8): Հարցվածների 37%–ը կարևորում է մասնագիտական դիպլոմում առկա մասնագիտական առարկաների գնահատականները, իսկ 38%-ը՝ ոչ:

Հարց 9. Գնահատեք հետևյալ մասնագիտական գիտելիքների/հմտությունների կարևորությունը կինեզիոթերապիստ աշխատանքի ընդունելիս, որտեղ 1-ը՝ անկարևոր, 5-ը՝ շատ կարևոր:

Գծապատկեր 9



Հարցմանը մասնակցած գործատուի համար մասնագիտական գիտելիքների/հմտությունների տեսանկյունից ամենակարևորը ընդհանուր մասնագիտական (Շատ կարևոր՝ 77,8%, կարևոր՝ 22,2%,) և նեղ մասնագիտական գիտելիքներն են (Շատ կարևոր՝ 77,8%, կարևոր՝ 11,1%, ցանկալի՝ 11,1%): Դրան հաջորդում է առաջին բուժօգնության իմացությունը՝ շատ կարևոր՝ 66,7%, կարևոր՝ 22,2%, ցանկալի՝ 11,1% (տե՛ս Գծապատկեր 9): Հետաքրքրական է, որ համեմատաբար ամենաքիչը կարևորվել է անամնեզ կազմելու ունակությունը՝ շատ կարևոր՝ 44,5%, կարևոր՝ 22,2%, ցանկալի 33,3%:

Հարց 10. Գնահատեք հետևյալ ընդհանրական գիտելիքների/հմտությունների կարևորությունը կինեզիոթերապիստ աշխատանքի ընդունելիս, որտեղ 1-ը՝ անկարևոր, 5-ը՝ շատ կարևոր:

Գծապատկեր 10



Գործատուի տված պատասխաններից պարզ է դառնում, որ ընդհանրական/ «փափուկ հմտությունները» ևս մեծապես կարևորվում են աշխատաշուկայի կողմից (55,6-88,9%):

Հարցմանը մասնակցած գործատուի համար ընդհանրական գիտելիքների/հմտությունների տեսանկյունից ամենակարևորը բժշկական էթիկային տիրապետելն է (Շատ կարևոր՝ 77,8%, կարևոր՝ 22,2%), այնուհետև հաղորդակցման հմտություններն ու թիմում աշխատելու ունակությունը:

Հարց 11. Ձեր կազմակերպությունում եղե՞լ են կամ կա՞ն կինեզիոլոգներ, որոնք սովորել/ավարտել են ՀՖԿՍՊԻ–ն:

Գծապատկեր 11



ՈԱԲ իրականացրած հարցմանը մասնակցած գործատուների մեծ մասի մոտ՝ 56%, աշխատում են ՀՖԿՍՊԻ–ի շրջանավարտ կինեզոլոգներ, իսկ 33%–ում ներկայումս Ինստիտուտի շրջանավարտներ չեն աշխատում, սակայն նախկինում եղել են (տե՛ս Գծապատկեր 11):

Հարց 12. Ձեր կազմակերպությունում եղե՞լ են կամ կա՞ն ՀՖԿՍՊԻ պրակտիկանտներ:

Գծապատկեր 12



ՈԱԲ իրականացրած հարցմանը մասնակցած գործատուների մեծ մասի մոտ՝ 78%, կան/ կամ եղել են ՀՖԿՍՊԻ–ի պրակտիկանտներ (տե՛ս Գծապատկեր 12), որոնց վերաբերյալ տեղեկություն ստանալու համար հարցաթերթում առկա է առանձին հարց, որին պատասխանել են այս հարցին «Այո» պատասխան տվածները:

Հարց 12.1 Եթե այո, ապա ինչպե՞ս կգնահատեք պրակտիկանտի հմտությունները:

Գծապատկեր 13



Այս հարցին մասնակցել է հարցման մասնակցած գործատուների 78%–ը և պատասխանները հաշվարկվել են արդեն այդ թվից ելնելով:

Այսպիսով, ստեղծված պատկերի համաձայն՝ ՀՖԿՍՊԻ–ի պրակտիկանտների ոչ մի հմտություն ոչ մի գործատուի կողմից «Գերազանց» չի գնահատվել: Ավելին՝ պրակտիկանտների հմտությունները հիմնականում գնահատվել են «Բավարար» (տե՛ս Գծապատկեր 13): Գործատուի միայն 14,3%–ն է «Լավ» գնահատվել Ինստիտուտի պրակտիկանտների բուժման պլան կազմելու ունակությունը, արագ ընկալելու կարողությունը, բարեվարքությունն ու բժշկական էթիկայի իմացությունը: Ամենաշատը անբավարար են գնահատվել պրակտիկանտների տերմինաբանության իմացությունն ու մասնագիտական գիտելիքները՝ 28,6%:

Հարց 12.2 Եթե ոչ, ապա կցանկանա՞ք համագործակցել բուհի հետ:

Գծապատկեր 14



Հարցված գործատուների 22%–ը, որը երբեք չեն ընդունել ՀՖԿՍՊԻ պրակտիկանտների պատրաստակամ է իր մոտ ընդունել թե՛ արտագնա դասեր, թե՛ պրակտիկա:

Հետագա համագործակցությունների պատրաստակամություն են հայտնել մասնավորապես «Գյումրի» և «Սիրունյան» վերականգնողական կենտրոնները:

Նշենք, որ թեև այս հարցին պիտի պատասխաներ միայն այն գործատուն, որը 12-րդ հարցին «Ոչ» է պատասխանել, սակայն գրանցել է մեկ չհամապատասխանող պատասխան, որը թեև 12.2 հարցի մեջ չի հաշվարկվել, սակայն հարկ ենք համարում ներկայացնել. «Աքսիոմեդ» կենտրոնը, որն ընդունել է ՀՖԿՍՊԻ–ի պրակտիկանտներ և նրանց բոլոր հմտությունները գնահատել է «Դժվարանում եմ պատասխանել», «Կցանկանա՞ք համագործակցել բուհի հետ» հարցին պատասխանել է «Ոչ»:

Հարց 13. Կինեզիոլոգների կրթության որակի բարելավման տեսանկյունից ի՞նչ առաջարկներ ունեք բուհին:

Ինչպես և ՈԱԲ–ի մյուս բոլոր հետազոտություններում այս դեպքում ևս գործատուի գլխավոր պահանջը գործնական ժամերի և պրակտիկայի տևողության ավելացումն է: Կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով գործատուն առաջարկում է բուհում ստեղծել կինեզոլոգիայի դահլիճ՝ համապատասխան մասնագիտական գույքով և սարքավորումներով:

- *Կրթական ծրագրում ավելացնել գործնական դասերը:*
- *Ավելացնել պրակտիկայի ժամերը և տևողությունը, սկսել այն ավելի ցածր կուրսերից:*

- *Ուսումնական պրոցեսի ընթացքում զգալի ավելացնել պրակտիկ աշխատանքներ, որը ապահովելու համար անհրաժեշտ է ինստիտուտում ունենալ գործող մասնագիտական սենյակ:*

Գործատուները մասնագետներ պատրաստելու հարցում բուհին ուղղել են նաև ավելի խորքային առաջարկներ.

- *Առաջին հերթին պետք է վերանայել դասավանդվող առարկաները և դրանց դասավանդման մեջ ներառված դասախոսների կոմպետենտությունը՝ անկախ նրանց դասավանդման ստաժից և գիտական կոչումից:*
- *Անհրաժեշտ է դասավանդման ծրագրում ներառել «Կլինիկական մտածողություն» առարկան, ավելացնել գործնական պարապմունքների քանակը՝ բարելավելով պայմանները, թարմացնել ուսանողներին մատուցվող նյութերը, խորացնել «կենսամեխանիկա», «անատոմիա» առարկաների դասավանդումը:*
- *Պրակտիկայի եկած բուհի «լավագույն» ուսանողները հաճախ ունենում են միջինից ցածր գիտելիքների մակարդակ: Պետք է խթանել ուսանողների ինքնակրթվելու և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները: Բացի այդ, պետք է նպաստել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների մասնակցելուն՝ որպեսզի տրված գիտելիքները ժամանակավրեպ չլինեն:*

ՈԱԲ հարցման գործատուներից մեկը՝ «Գյումրի» վերականգնողական կենտրոնը ցանկություն է հայտնել 6-10 ուսանողի կամ շրջանավարտի ներգրավել իր կողմից իրականացվող վերապատրաստումներին և առաջարկում է տրամադրել իր ունեցած բազան հետազոտական աշխատանքներ կատարելու և/կամ մագիստրոսական թեզեր գրելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023-2024 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ—ի «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» բակալավրի կրթական ծրագրի աշխատաշուկայի կարիքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ

- ✓ Կինեզիոթերապիստ աշխատանքի ընդունելիս կարևորագույն հանգամանքը բարձրագույն կրթությունն է (88.9%) և վերապատրաստումները (77,8%), սակայն պակաս կարևոր է մասնագիտական կրթությունը:
- ✓ Կիեզիոթերապիստների աշխատանքի ընդունելիս մասնագիտական դիպլոմում մասնագիտական առարկաների գնահատականների կարևորության մասին գործատուների կարծիքները կիսվել են՝ 37%–ը կարևորվում է, 38%–ը՝ ոչ:
- ✓ Կինեզիոթերապիստին աշխատանքի ընդունելիս մասնագիտական հմտություններից ամենակարևորներն են ընդհանուր մասնագիտական և նեղ մասնագիտական գիտելիքները, իսկ փափուկ հմտություններից՝ բժշկական էթիկայի տիրապետումը, հաղորդակցման հմտություններն ու թիմում աշխատելու ունակությունը:
- ✓ Հարցման այն մասնակիցները, որոնք պրակտիկանտներ են ընդունել ՀՖԿՍՊԻ–ից, վերջիններիս հմտություններից ոչ մեկը «գերազանց» չեն գնահատել: Գործատուի մեծ մասը ՀՖԿՍՊԻ պրակտիկանտների հմտությունները հիմնականում գնահատել են «Բավարար»:
- ✓ Այն գործատուները, որոնք չեն ունեցել ՀՖԿՍՊԻ պրակտիկանտներ, պատրաստ են ընդունել նրանց թե՛ պրակտիկայի, թե՛ արտագնա դասերի համար:
- ✓ Ժամանակակից գործատուի հիմնական առաջարկը գործնական դասընթացների ավելացնում ու պրակտիկայի տևողության երկարաձգումն է: Առաջարկվում է նաև վերանայել դասախոսական առարակայացանկը՝ ներգրավել պրակտիկ ոլորտի մասնագետների:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հաշվի առնելով «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» բակալավրի կրթական ծրագրի աշխատաշուկայի կարիքների վերլուծությունը, գործատուի ներկայացրած մասնագիտական պահանջները՝ կարևոր ենք համարում առաջարկել.

- ✓ Կրթական ծրագրի ուսումնական պլանում ավելացնել գործնական առարկաներին հատկացվող ժամաքանակը, իսկ առարկաների բովանդակության մեջ շատացնել գործնական բաղադրիչը:
- ✓ Հնարավորության դեպքում պրակտիկան կազմակերպվել ավել վաղ, իսկ արտագնա դասերը՝ ավելի հաճախ:
- ✓ Գործատու ոլորտի ներկայացուցիչների հետ իրականացնել նպատակային հանդիպում ուսումնական պլանում նոր առարկաներ ներառելու համար:
- ✓ Վերանայել ուսումնական պլանում ներառված առարկաների բովանդակությունը:
- ✓ Իրականացնել դասալսումներ կրթական ծրագրի դասախոսներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար՝ դուրս բերելով մասնագիտական վերապատրաստման կարիքներն ու մասնագիտական թեմաները:
- ✓ Առարկայացանկում ավելացնել փափուկ հմտություններ զարգացնող առարկաներ՝ հատկապես հաղորդակցման հմտություններն ու թիմում աշխատելու ունակությունը զարգացնելու համար:
- ✓ Հնարավորության դեպքում բուհում ստեղծել մասնագիտական սենյակ, որտեղ տեսական գիտելիքները հնարավոր կլինի վերածել գործնական կարողությունների:
- ✓ Ընդլայնել համագործակցությունը մասնագիտական կառույցների հետ պրակտիկ հմտությունների զարգացման նպատակով, այդ թվում նաև ավարտական աշխատանքների և/կամ մագիստրոսական թեզերի իրականացման շրջանակում: